«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Առարկան՝Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Ն. Բաղդասարյան

Ուսումնական հաստատություն՝ <<Երևանի հ. 45 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ

Երևան 2022

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Ներածություն

Ըստ Դ.Բ. Էլկոնինի՝ այս փուլի ուսումնական գործունեության առանձնահատկությունն այն է, որ երեխան փոխում է ինքն իրեն: Նա գիտակցում է գիտելիքներ ստանալու կարևորությունը, կարողանում է պարզ ենթադրություններ անել և փաստարկներ գտնել դրանց հիմնավորման ու ապացուցման համար, տարրական մակարդակով վերլուծում է իր գործունեությունը, գնահատում է հաջողությունները, որոշում է սխալների պատճառները: Բայց դա հնարավոր է եթե ձևավորված է ուսումնական գործունեություն, եթե ուսուցման գործընթացը նրան դարձնում է սուբյեկտ, այսինքն աշակերտին սովորել ենք սովորեցնում, երբ նա ուսուցման արդյունքների հարցում գիտակցում է անձնական պատասխանատվություն, ունի ինքնակրթության և ինքնազարգացման կարողություններ:

1. Ինչու եմ ընտրել այս թեման: Վերը նշվածների հետ մեկտեղ նախաայբբենական փուլի գլխավոր նպատակը երեխաներին գրաճանաչությանը նախապատրաստելն է: Ուստի շատ եմ կարևորում նախաայբբենական փուլը:

2. Ինչ ուղիներ կան նախաայբբենական փուլը ճիշտ կազմակերպելու համար: Կան բազմաթիվ ուղիներ սկսած ձեռքի մատների վարժություններից, գրաֆիկական և մանրագծման վարժություններից…ուսուցման նախապատրաստման վարժություններից և այլն:

Ինչպես նշված է «Հանրակրթության պետական կրթակարգում», «Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների սովորաղների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը»: «Ներդաշնակ զարգացում» հասկացությունը պետք է ընկալել բառի սկզբնական, ամենաճիշտ ձևով: Այս պարագայում դա նշանակում է ոչ միայն երեխայի մտածողության զարգացումը, այլ նրա անձի համընդհանուր զարգացումը, անձի պատրաստ լինելը հետագա զարգացման համար: Դա ենթադրում է դասերի ժամանակ ստեղծել այնպիսի մթնոլորտ (ընդհանրապես՝ աշակերտի ուսուցչի ու դպրոցի փոխհարաբերություններում), որը կբացահայտի սովորաղների հնարավորությունները, կնպաստի նրանց հոգևոր ներուժի զարգացմանը և ստեղծագործական ակտիվությանը:

Ըստ վերոհիշյան խնդիրների, որոնք են կրտսեր դպրոցին ներկայացվող խնդիրները:

Փորձենք ձևակերպել այսպես.

1. Դպրոցականի անձի ներդաշնակ զարգացում. Ընդհանուր ունակությունների և մտահորիզոնի ձևակերպում՝ նրանց յուրաքանչյուրի անհատական հնրավորություններին և առանձնահատկություններին համապատասխան:

2. Գործունեության տարրական մշակույթի կայացում. Ուսումնական գործունեության հիմնական բաղադրիչների տիրապետում՝ ուսումնական խնդրի ընկալման համապատասխան գործողությունների կատարման, ստուգման, ինքնաստուգման, գնահատման և ինքնագնահատման կարողությունների դրսևորմամբ:

3. Ինքնակրթության պատրաստվածության ձևավորում. (սովորել սովորելու կարողություն), աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների որոշակի մակարդակի ապահովում:

Վերոհիշյալ նպատակներն իրականացնելուն միտված ուսուցման գործընթացը կապահովի դպրոցականի զարգացումը՝ որակական փոփոխություններ բերելով նրա ֆիզիկական, հոգեբանական և հոգեկան զարգացման հարցերում:

Այս ամենի համար հարկավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որ երեխայի տարիքային բնական պահանջները՝ ճանաչման, հաղորդակցման, գործողության բավարարվեն:

Առաջին դասարան եկած աշակերտը կրտսեր դպրոցում սովորած տարիների ընթացքում ձեռք է բերում որոշակի քանակի գիտելիքներ և կարողություններ: Այդուհանդերձ, սկզբունքորեն կարևոր խնդիր է ոչ միայն նրա ձեռք բերած կենսափորձը, այլև նրա գործունեության բնույթը, ճանաչողական հետքրքրությունների մակարդակը ինքուսուցման և ինքնադաստիարակության պատրաստվածությունը, այսինքն այն հատկանիշները, որոնցով և բնութագրվում է դպրոցականի զարգացման մակարդակը:

Որո՞նք են կրտսեր դպրոցականի կրթությանը ներկայացվող պահանջները:

- Երեխայի ընդհանուր կուլտուրան և մտահորիզունը, գիտելիքներն ինքնուրյունաբար ձեռք բերելու և կիրառելու կարողությունը փոփոխվող կենսական իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և գործելու պատրաստվածությանը:

- Կրտսեր դպրոցականի առաջատար գործունեության ձևավորվածությունը այնպիսի որկաների առկայությունը, գործնականությունը, պատասխանատվությունը, և պատրաստավածությունը հետագա կրթությանը:

- Առաջնայինը պետք է լինի յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունների, հետքրքրությունների, հակումների, ունակությունների պահպանումն ու սատարումը: Շերտավորված ուսուցման եռաստիճան համակարգը ենթադրում է երեխաների պատրաստվածության տարբեր մակարդակներ:

Այսօրվա կրտսեր դպրոցականն իր նախորդներից տարբերվում է ուսումնական գործունեության նկատմամբ դրսևորված վերաբերմունքով: Ըստ Դ. Բ. Էլկոնինի՝ ուսումնական գործունեության առանձնահատկությունն այն է, որ երեխան փոխում է ինքն իրեն: Սա նշանակում է, որ կրտսեր դպրոցականն անտարբեր չէ իր գործունեության նկատմամբ, գիտակցում է գիտելիքներ ստանալու կարևորությունը, կարողանում է պարզ ենթադրություններ անել և փաստարկներ գտնել դրանց հիմնավորման ու ապացուցման համար, տարրական մակարդակով վերլուծում է իր գործունեությունը, գնահատում է հաջողությունները որոշում է անհաջողությունների կամ սխալների պատճառները: Բայց դա հնարավոր է, եթե ձևավորված է ուսումնական գործունեություն, եթե ուսուցման գործընթացը նրան դարձնում է սուբյեկտ, այսինքն աշակերտին սովորել են սովորեցնում, երբ նա ուսուցման արդյունքների հարցում գիտակցում է անձնական պատասխանատվություն, ունի ինքնակրթության և ինքնազարգացման կարողություններ:

Մանկական ինքնուրույնության, նախաձեռնողականության, պատասխանատվության և առաջին հերթին՝ սովորել կարողանալու. դաստիարակումն այսօր ընկալվում է որպես 21-րդ.դ. կրթության առաջին արժեք ու նպատակ: Համադասարանցիների հետ համատեղ աշխատանքով ուսուցչին կհաջողվի դասարանը վերածել ուսումնական համագործակցության: Պետք է կարողանալ ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ բացահայտվեն յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները, որ նրա համար սովորելը դառնա անհատական պատասխանատվության գիտակցում, ինքնուրույն լինելը՝ վարքագծի բնականոն դրսևորում: Այսինքն՝ դասագիրքը պետք է գրված լինի բոլոր աշակերտների համար և յուրաքանչյուրի: Այս ամենը չի կարող իրականացվել առանց համապատասխան դասագրքերի:

«Այբենարանը»-ը, որը գրված է հենց այդ նկատառումները հաշվի առնելով, որը գիտելիքների ձեռքբերման և համակարգման, ինքնավերահսկման և ինքնագնահատականի հնարավորություն է ընձեռնում: Այսպիսի դասագրքերով աշակերտը ձեռք է բերում

նախաձեռնելու ունակություն, հիմք է դրվում նրա ինքնուրույնությանը անհատական ուսման և ստեղծագործելու իրավունքի դրսևորմանը:

«Այբենարանը» որպես դասագիրք ստեղծվել է՝ մշտապես աչքի առաջ ունենալով երեխաների կենսափորձը և սոցիալական միջավայրը: Առանց դրանք հաշվի առնելու հնարավոր չէ երեխաների մեջ ուսման նկատմամբ հետքրքրություն առաջացնել, նրանց մեջ ուսումնական դրդապատճառներ արթնացնել: Թեև երեխաների մեջ այդ տարիքում կա ճանաչողական պահանջ, սակայն դա բաղադրիչներից միայն մեկն է: «Այբենարանը» հիմք է դնում աշակերտների շերտավորված ուսուցման համար, քանզի այստեղ առկա են տարբեր մակարդակի բազմաթիվ դասանյութեր և առաջադրանքներ, որոնք ընտրված են ոչ թե «շատ քիչ» սկզբունքով, այլ «բարդ-պարզ» սկզբունքով, այսինքն յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն ունի կատարելու ցանկացած լեզվատրամաբանական առաջադրանք, բայց ուսուցման տարբեր փուլերում:

Այբենարանի ամենակարևոր առանձնահատկությունն էլ այն է, որ երեխաներին տրվում է առավելագույնը և նրանցից պահանջվում էնվազագույն պարտադիրը մինիմաքսի սկզբունք: Դասագրքի գլխավոր խնդիրը երեխայի զարգացումն է, ընդ որում ոչ միայն նրա մտածողության զարգացումը, այլև նրա անհատականության ամբողջական զարգացումը և նրա պատրաստ լինելը հետագա զարգացման համար:

Կրտսեր դպրոցականների ուսուցման արդյունավետության բարձրամանը մեծապես նպաստում է ուսումնական նյութի մատուցման բազմազանությանը, որը ծառայում է ոչ միայն գիտելիքներ և կարողություններ ձեռքի բերելուն, այլև աշակերտների մտավոր, հուզական, կամային և գեղագիտական բազմակողմանի գործունեությաը: Դասագիրքը շատ էական դեր կարող է խաղալ ուսուցման արդյունավետության բարձրացման գործում, գրքի նկատմամբ հետաքրքրասիրության բարձրացման և գիտելիքների ձեռքբերման ոչ ստանդարտ իրավիճակներում գործադրելու իրողությունների ձևավորման ու զարգացման գործում:

«Այբենարանի» կառուցվածքը հնարավորություն է ընձեռնում շատ արդյունավետ, հետքրքրաշարժ ձևերով երեխաներին սովորեցնել կարդալ, գրել զարգացնել խոսքը, երևակայությունը, հիշողությունը, նախագիտելիքներ տալ լեզվի մասին, նրանց նախապատրաստել հետագա ուսուցման համար, սովորեցնում է սովորել և մտածել:

«Այբենարան»-ում զետեղված նյութերը գրավիչ ու հետաքրքիր հնարներով, բազմաբնույթ առաջադրանքներով, զվարթ պատմություններով, խնդուկներով ու բառախաղերով,

առածներով ու հանելուկներով և բազմաթիվ այլ միջոցներով ուսուցումը դարձնում են արագ, հեշտ ու արդյունավետ:

«Այբենարան»-ում տեղ են գտել նաև դաստիարակչական և զարգացման խնդիրները:

Դասագրքերի յուրաքանչյուր էջ նկարազարդված է, մեթոդական կառույցը հագեցված է բազմաբնույթ առաջադրանքներով: Գրքի յուրաքանչյուր էջ գրավիչ է հոգեհարազատ է երեխային, հարմարավետության զգացում ծնող, զվարթություն բերող մտերմիկ տրամադրություն ստեղծող: Դասագիրքը ավելի մատչելի դարձնելու, մշտական կրկնության, վերլուծության, ինչպես նաև նորանոր գիտելիքներ ձեռք բերելու և այդ ամենից բերկրանք ստանալու, տոնական զգացողություն ունենալու նպատակով օգտագործվել են բազմաթիվ խաղեր, կատակներ, փոքր բեմադրություններ, բազմաբնույթ լեզվատրամաբանական առաջադրանքներ:

Բնականաբար, ամեն ինչ նպատակաուղղված է երեխայի ստեղծագործական երևակայության ու մտածողության, կարդալու կարողությունների, խոսքի զարգացմանը ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպոռ ու մարմնապես առողջ անձի ձևավորմանը:

Հայտնի է, որ գեղարվեստական ստեղծագործություններով ուսումնասիրելիս ուշադրությունը բևեռվում է նյութի հուզական, զգացմունքային, ինչպես նաև դաստիրակչական կողմին, իսկ գործնական բնույթի նյութերի դեպքում՝ աշխարհաճանաչողական և դատողական կողմին, թեև այստեղ և լայն հնարավորություններ կան երեխաների համակողմանի դաստիրակաության համար:

Որո՞նք են «Այբենարանին» ներկայացվող պահանջները.

1. Համապատասխանություն պետական ծրագրին:
2. Գիտական նվաճումների, սկզբունքների, նորամուծումների, առկայություն:
3. Կառուցվածքի տրամաբանականություն:
4. Կարդալու և գրելու կարողությունների ձևավորման և զարգացման ժամանակակից մեթոդների առկայություն:
5. Լսելու և խոսելու ունակության զարգացման ապահովում:
6. Խոսքի քերականական կառուցվածքի տիրապետման հնարավորության ընձեռում:
7. Լեզվական գիտելիքների մատուցում՝ հնչյունաբանություն, ձևաբանություն, խոսքի մասերի, շարահյութսության, կետադրության, ուղղագրության վերաբերյալ:

8. Դասագրքի բառապաշարի հարստությունը (1284 բառ) երեխաների գործուն, ոչ գործուն և ներթաքուն բառապաշարի հարստացում և ընդլայնում: Երեխաների մեջ լեզվական ամբողջ հաստությունից օգտվելու (հետևապես) պահանջի ձևավորում:
9. Բնագրերի լեզվի պարզության և գեղարվեստականության ապահովում:
10. Հայոց լեզվի գեղեցկության և հարստության բացահայտում երեխաների համր, նրանց մեջ մայրենի լեզվի նկատմամբ հետաքրքրություն, սեր և հայրենասիրական վերաբերմունքի ձևավորում:
11. Աշակերտների՝ գիտելիքների ինքնուրույն յուրացման հնարավորության ընձեռում:
12. Հետքրքրաշարժական ապահովում:
13. Լեզվատրամաբանական առաջադրանքների առկայություն և «պարևզից բարդ» սկզբունքի կիրառում:
14. Վերարտադրողական բնույթի առաջադրանքների առկայություն:
15. Դտեղծագործական բնույթի առաջադրանքների առկայություն:
16. Տարամակարդակ (շերտավորված) ուսուցման հնարավորության ապահովում (մինիմաքս սկզբունքի կիրառում):
17. Միջառրակայական կապերի ապահովում:
18. Արժեքային համակարգի ձևավորման և զարգացման տարրերի առկայություն:
19. Երեխաների ստեղծագործական երևակայության տրամաբանական մտածողության, ուշադրության, հիշողության զարգացում:
20. Ժողովրդական բառ ու բանի ուսուցում:
21. Աշխարհաճանաչողական գիտելիքների ձեռքբերում և համակարգում:
22. Հումորի զգացումը զարգացնող նյութերի առկայություն:
23. Դիդակտիկ նյութերով ապահովվածություն:
24. Պատկերազարդումների որակը:
25. Տառատեսակների և տառաչափերի ընտրությունը:
26. Գրքի չափսի ճիշտ ընտրությունը:
27. Տարագրական որակը:

«Այբուբենը» կառուցված է հնչյութավանկային (բառային) վերլուծական համադրական մեթոդով, հնարավորություն է ընձեռում դասը վարելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ՝ շերտավորված ուսուցում, անհատակողմնորոշիչ ուսուցում, համագործակցային ուսուցում և այլն:

«Այբենարանը»բաղկացած է հետևյալ բաժիններից.

I Նախաայբենական շրջան (էջ 2-43, 49 դասաժամ):

II Այբենական շրջան (էջ 44-141, 105 դասաժամ):

III Հետայբենական շրջան (էջ 142-151, 7 դասաժամ):

Նախաայբենական բաժնի հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է:

Ներկայացված թեմատիկ նկարները, նկար-պատմությունները, նախադասության և բառի ընդհանրացված գծապատկերները, բառի վանկային ու հնչյունային կազմի գծապատկերները խոսքի զարգացման, լեզվական վերլուծությունների ու համադրությունների, կարդալու կարողության ձևավորման հիմքն են:

Նախագծային բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրասիրություն, սեր գրքի և դպրոցի նկատմամբ, սովորելու ցանկություն: Առնչվելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքներին, հաճույքով կատարելով դրանք՝ երեխաները ուժեղ կզգան իրենց, կդառնան զվարթ, շփվող, նրանց չի լքի հաջողակ լինելու զգացումը:

Նախագրային բաժնի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ կատարելուն նախապատրաստելը և, միաժամանակ, նրանց մտածողության զարգացումն է, ստեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետքրքրությունների խթանումը:

Սկսած նախաայբենական շրջանից նյութը մատուցված է այնպես, որ երեխան հեռու մնա սերտողականությունից, որ համար գլխավորը դառնա ոչ թե ինչ-որ բան հիշելը, մտապահելը, այլմտածելը:

Զանազան տեղեկություններով ուղեղը ծանրաբեռնելը դեռևս չի նշանակում երեխային գիտելիք տալ, մեխանիկորեն հիշելը, անգիր անելը ստեղծագործական մտքի անհաշտ հակառակորդներ են: Երեխան իսկական հաճույք է ապրում, երբ ինչ-որ հարցի պատասխանում է ճիշտ, բայց նա կրկնակի բերկրանք է ապրում, երբ այդ պատասխանը ոչ թե մեխանիկորեն հիշելու արդյունքն է, այլ ինքնուրույն դատողության:

Փորձը ցույց է տվել, որ հատկապես կրտսեր տարիքի երեխաներին շատ են հետաքրքրում լեզվատրամաբանական, ուսուցողական առաջադրանքները. չէ՞ որ դրանց շնորհիվ նրանք ավելի հեշտորեն են յուրացնում ուսուցանվող նյութը և ավելի են կապվում գրքին, սովորում են սովորել և այդ սովորելուց հաճույք ստանալ, սովորում են մտածել, ինքնուրույն վճիռներ

կայացնել, գնահատել իրենց կատարածը, համեմատվել ուրիշների հետ, մրցել, Հետևաբար զարգանում է նրանց տեղծագործական երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, նրանց միջև ձևավորվում են երկարատև կենտրոնանալու, կամք դրսևորելու ունակություններ:

Նախագծային շրջանի ընթացքում երեխաները ծանոթանում են դասագրքին, համակարգում են առարկաների հատկությունները (գույն, ձև, չափս, պատրաստման նյութ): Ծանոթանում են առարկաների միջև որոշ հարաբերությունների և առնչությունների մեծ-փոքր, հաստ-բարակ, երկար-կարճ, լայն-նեղ, ծանր-թեթև, վերև-ներքև, առաջ-հետ, հեռու-մոտ, աջ-ձախ, մասին ունեցած գիտելիքներին:

Նախագծային շրջանում երեխաները սովորում են իրենց փոքրիկ կենսափորձը կիրառել զանազան առաջադրանքներ կատարելիս, սովորում են մրցակցել, համերաշխ լինել, պայքարել, շփվել միմյանց հետ, ճիշտ ձևակերպել իրենց մտքերը: Նրանք կկարողանան առարկաները համեմատել ըստ իրենց որևէ հատկանիշի, առարկաները խմբավորել ըստ ընդհանուր հատկանիշի: Նրանց միջև կձևավորվեն ու կզարգանան ժամանակակից և տարածական պատկերացումները: Նրանք կկարողանան ճիշտ կառուցել խոսքը, պատմել որևէ նկարի բովանդակություն, գտնել նկարում պատկերվածանհեթեթությունները, բացատրել, թե որն է ճիշտը:

«Այբենարանի» նախագծային և «մաթմատիկայի» նախաթվային բաժինները որոշ չափով համընկնում են: Երկու դեպքում էլ երեխաները նախապատրաստվում են առավել լուրջ ուսումնական գործընթացի՝ մի դեպքում տառեր և գործողություններ նրանց հետ, մյուս դեպքում՝ թվեր և գործողություններ նրանց հետ:

Երկու մասերի ենդհանրությունը հնարավորություն է ընձեռում, որ երեխաները նույն երևույթին տարբեր տեսանկյուններից նայեն, տարբեր ձևերով նայեն, հաճախ կրկնեն արդեն անցած նյութերը, ամրապնդեն ձեռք բերած գիտելիքները, համակարգեն իրենց պատկերացումներն այս կամ այն երևույթի վերաբերյալ:

Նախագծային շրջանում երեխաները ծանոթանում են կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչներին, կատարում են զանազան համեմատություններ, գտնում են առարկաների նմանություններն ու տարբերությունները, վարժվում են երկարատև և լարված աշխատել որևէ առաջադրանք կատարելիս, սովորում են գտնել, թե որ առարկաներն են «ընկերներ», որ առարկաները՝ «հակառակորդներ», վարժվում են մտնել և դուրս գալ բավիղներից՝ աշխատացնելով հայացքը և մատիտը, առարկաների միջից գտնել

«ավելորդը», առարկաները դասակարգել ըստ հատկանիշի որևէ հատկանիշի, նկատել առարկաները պակասող մասերը, գունավորել ու գծել, կատարելագործել դաստակի ու մատների նրբաշարժումները: Նրանք վարժվում են խոսքից (պատմությունից) առանձնացնել նախադասություն, նկարագրությունից՝ բառ, բառերը վանկարկել և երնթարկել հնչյունային վերլուխության, իմանում են, թե ինչ է գծապատկերը, վանկային կորը, հնչյունը, ճանաչում են ձայնավոր հնչյունները, իմանում են նրանց վանկավար դերի մասին:

Զարգանում է նրանց հնչյունաձայնային լսողությունը, բառից այս կամ հնչյունը առանձնացնելու կարողությունը, լսելու և խոսք կառուցելու հմտությունը, մտքերը շարադրելու կարողությունը: Երեխաները սովորում են անվանել նկարում պատկերված առարկաները, կազմել նախադասություններ ըստ նկարների, հորինել պատմություններ «կարդալ» նկարաշարեր, նախադասություններն ու բառերը ներկայացնել գծապատկերներով:

Այս ամենը կատարվում է երեխաների համար հոգեհարազատ այն միջավայրում, որն ստեղծում է «Այբենարանը» իր գունագեղությամբ, առաջադրանքների հետաքրքրաշարժությամբ, նյութի մատուցման խաղային հնարքներով:

Նախաայբենական շրջանում գրուսուցմանը նախապատրաստելու գործընթացը հաջողությամբ կարելի է իրագործվել միայն այն դեպքում, երբ մանկավարժը և ծնողը հստակ պատկերացնում են դրա նպատակն ու խնդիրները, <u>իրականացման ուղիներն</u> ու միջոցները և պահպանում հետևողականություն ու հաջորդականություն:

Առաջին դասարանների նախայբենական ուսուցման մեջ կարևորվում են գրաճանաչողության և գրուսուցման նախապատրաստական ուսուցման և իրականացման ուղիներն են ու աշխատանքները; Ըստ հոգեբանների և ֆիահիոլոգներ այս տարիքում դեռևս զարգացած չեն ձեռքի մանր մկանները, ձևավորված չէ շարժումների համագործակցությանը, ավարտված չէ ձեռքի մատների ոսկրացումը: Զարգացման տարբեր փուլերում են գտնվում տեսողական զգայարաններն ու շարժողական ունակությունները:

Գրավոր աշխատանքն ինքնին բարդ գործընթաց է: Այն երեխայից պահանջում է լարվածություն, ուշադրություն, կենտրոնացում, աշխատանքի ինքնավերահսկում, գրելու տեխնիկական հմտություններ, տառի մասնիկի, ձևի, չափերի համապատասխանություն, ուղիղ գծի ճշգրիտ պահպանում և այլն: Անհրաժեշտ է նաև ձեռքի աշխատանքի համագործակցում տեսողական, լսողական զգայարանների և ուղեղի աշխատանքի հետ:

Պահանջում է որոշակի վերաբերմունքի մշակում՝ գրելու պարագաների (թուղթ, տետր, մատիտ, գրիչ և այլն) նկատմամբ:

Գրելու գործընթացը երեխայից պահանջում է ոչ միայն մտավոր, ֆիզիկական ունակություններ, այլև հուզական կայունություն: Գրուսուցմանն առնչվող ցանկացած ծանրաբեռնվածություն կամ գերբեռնվածություն բացասաբար կարող է անդրադառնել գրելու ունակությունների և հմտությունների ձևավորման վրա: Այդ նկատառմամբ էլ ուշադրության կենտրոնում պետք է պահել երեխայի կեցվածքի, տետրի տեղի ու դիրքի, գրիչը կամ մատիտը ճիշտ բռնելու և օգտագործելու, ինչպես նաև երեխայի աշխատանքի ինքնուրույնության խնդիրները:

Տրված բոլոր հանձնարարություններն պետք է հաճույք պատճառեն երեխաներին: Հակառակ դեպքում դրանք շատ շուտ կձանձրացնեն և կհոգնեցնեն նրանց:

Երեխային գրուսուցմանը նախապատրաստելու համար անհրաժեշտ է կազմակերպել.

1. Ձեռքի մատների վարժություններ,
2. Մանր առարկաներով (կոճակներ, քարեր) խաղեր,
3. Գրաֆիկական և մանրագծման վարժություններ,
4. Տողերի և միջտողային տարածությունների պահպանման վարժություններ,
5. Տառերի առանձին մասնիկներինմավող նկարչական աշխատանքներ,
6. Ապլիկացիա, պլաստիլինով աշխատանք
7. Կառուցողական նյութերով և խճանկարային խաղեր,
8. Թղթի ծալումով աշխատանք,
9. Գծանկարներով տրված նկարների ներկում,
10. Գրուսուցման նախապատրաստման վարժություններ:

<u>Մատների մարզանք</u>

Մատնային վարժությունները զարգացնում են երեխայի ձեռքի մկանները, նրան նախապատրաստում նկարելու, գրելու և նպաստում ձեռքի շարժումների համագործակցության ձևավորմանը: Այդ կերպ հնարավորություն է ստեղծվում սեփական ձեռքերի և մատների շարժումներն իրեն ենթարկելու: Ձևավորվում է ուշադրությունը: Մատների շարժումներից ստացված ազդակները խթանում են նաև երեխայի խոսքի զարգացումը: Մատնային վարժությունների կատարումը երեխայի ձեռքի շարժումները դարձնում է համարձակ, հմուտ, ճկուն: Բարձրանում է ձեռքի դաստակի

շարժունակությունը, որը հետագայում գրուսուցմանը նպաստող կարևոր գործոն է: Ձեռքի մկանների և շարժումների զարգացման նպատակով կարելի է երեխաների հետ կազմակերպել մատնային խաղեր: Մատի շարժումներով երեխան կարող է պատկերել տարբեր առարկաներ, կենդանիներ, կատարել բեմականացումների ցուցադրում:

Ցսպիսի խաղերը զարգացնում են նաև երեխաների ստեղծագործական միտքը: Սովորեցնում ենք նաև մասնիկի անուններով ոտանավորներ և բանաստեղծությունները: Մատնային վարժություններում և խաղերը հաղորդում են դրական լիցքեր, բարձրացնում նրանց տրամադրությունը: Նմանատիպ խաղերի տևողությունը չպետք է գերազանցի 3-7 րոպե:

Խաղեր մանր առարկաներով, քարերով, կոճակներով.

Այս խաղերը նպաստում են ձեռքերի շարժումների ճկունության ձևավորմանը: Երեխաներին հանձնարարվում է տեսակավորել և առանձին խմբավորել նման առարկաները կամ դրանցով դասավորել որևէ առարկայի պատկեր: Կարելի է առաջարկել երկու մատներով (բութ և ցուցամատ) ամուր բռնել և սեղմել փոքրիկ քարը կամ կոճակը կամ երկու ձեռքերի ափերով բռնել որևէ առարկա և կատարել շարժումներ:

Թղթի կտրման աշխատանքներ

Երեխային առաջարկվում է թղթի ծալման եղանակով և տրված առարկայի ուրվագծով կտրել թուղթն ու ստանալ առարկայի սիմետրիկ պատկերը:

Մկրատով թուղթը կտրելու աշխատանքները զարգացնում են ձեռքի մկանները, հմտացնում շարժումները, ձևավորում շարժումների համագործակցության ունակություն:

Նկարչության և ուրվագծված նկարների գունավորում

Բոլոր երեխաները, գրեթե առանց բացառության մոլեռանդ նկարիչներ են: Նրանք այն կատարում են մեծ սիրով և հետաքրքրասիրությամբ: Նկարչությունը գրուսուցման նախապատրաստման զորեղ միջոցն է:

Ուրվագծային նկարների ներկումը կենտրոնացնում է երեխայի ուշադրությունը, ձևավորում կամային հատկություններ, զարգացնում տեսողական և շարժողական զգայարանները, սովորեցնում չխաղտել եզրագծերը, կոկիկ և մաքուր աշխատել:

Թղթի ծալումով աշխատանք (օրիգամի)

Թղթի ծալումով աշխատանքները զարգացնում են երեխայի հիշողությունը, հստակեցնում ճշգրիտ շարժումների կատարումը:

Գծանկարչական վարժություններ, մանրագծում, նրբագծում

Այս աշխատանքները ձեռքը նախապատրաստում են գրելու գործընթացին, զարգացնում ձեռքի մանր մկանները, հմտանում և հստակեցնում են շարժումները: Գծանկարչական վարժությունները երեխաների մեջ ձևավորում են համարձակություն և ինքնավերահսկում՝ իր իսկ կատարած աշխատանքների նկատմամբ: Անհրաժեշտ է կատարել նախ՝ ուղղագիծ պատկերներ, ապա ապա անցնել կոր գծին: Կարևոր է մանրագծման և նրբագծման աշխատանքների կատարումը, որի ընթացքում երեխան պարտադիր պետք է պահպանի.

- գծի ուղղությունը,
- զուգահեռ դիրքը,
- միջգծային տարածությունը,
- գծի հաստությունը

Գծանկարչական վարձությունների շերտագծման, նրբագծման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է՝ հետևողական աշխատանք տանել.

- երեխայի ճիշտ կեցվածքի պահպանման,
- մատիտը և գրիչը ճիշտ բռնելու և օգտագործելու,
- տառերի առանձին մասնիկների գրառման, չափերի, ուղղությունների և ձև պահպանման (ուղիղ, թեք, երկար, կարճ, պտուտավոր, կիսաձվաձև և այլն) ուղղությամբ,
- պահպանել հիգենիկ կանոնները:

Պետք է կատարել վարժություններ՝ նպատակաուղղված՝

- միջգծային տարածությունների, միջմասնիկային հեռավորությունների և դրանց հաջորդականության պահպանմանը,
- աչքաչափի ձևավորմանը ւ ձեռքի մատների զարգացմանը:

Քսանմեկերորդ դարում արձանագրված տեխնոլոգիական աննախադեպ զարգացումը լուրջ խնդիրներ է առաջադրում մարդկությանը: Այդ տեսանկյունից շատ կարևոր է այն հանգամանքը, որ կրթությունը համաքայլ ընթանա ժամանակի փոփոխություններին: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներում հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Իսկ ի՞նչ դեր պետք է խաղա դպրոցում և ինչպիսին պետք է լինի դասի բովանդակությունը, որպեսզի մարդուն նախապատրաստի լիարժեք կյանքին և աշխատանքին: Այսօր անհրաժեշտություն է ծագում ուսուցման գործընթացը կազմակերպելու ժամանակից տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև նոր մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ: Այդ տեխնոլոգիաների

կիրառումը պետք է դառնա ուսուցչի գործունեության և ցանկացած դասի անխաղտ բաղադրիչը: Այն կնպաստի աշակերտի անձի զարգացմանը, նրա մտավոր աճի, գիտելիքների խոր և իմաստավորված յուրացմանը, նրա բարոյական հիմքերի ձևավորմանը:

Եզրակացություն:

Կրթության բովանդակության մեջ կարևորվում են ոչ միայն գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, այլև աշակերտների բանիմացությունը, քննադատական մտածողությունը, արժեքները, դիրքորոշումները, այսինքն՝ այնպիսի որակներ, որոնք նրան անհրաժեշտ են ամբողջ կյանքի ընթացքում:

Երեխայի գլուխը ոչ թե դատարկ տակառ է, որը պետք է լցնել, այլ ջահ է, որը պետք է բոցավառել:

Մ. Ֆ. Քվինթիլիանոս

Եթե մենք սովորեցնենք այնպես, ինչպես սովորեցրել ենք երեկ,
ապա մենք երեխաներից կգողանանք նրանց վաղվա օրը:

Ջոն Դյուի

Ժամանակակից դասն արդի ժամանակաշրջանում իրականացվող, երեխայի, նրա ծնողների, հասարակության և պետության ներկայիս պահանջներից բխող դաս է:

Դեռևս Ուշինսկին գտնում էր, որ լեզուն ամենամեծ մանկավարժն ու դաստիարակն է հատկապես երեխայի կյանում, որն աշխարհին ընկալում է մայրենի լեզվի միջոցով: Ուսումնասիրելով մայրենի լեզուն՝ երեխան ոչ միայն պատմական հնչյուններ և բառեր է սովորում. Մայրենի լեզվի մեջ նա գտնում է իր ազգի մտածողության և աշխարհայացողության առանձնահատկությունները, հայրենի բնության շունչը, ձայներն ու գույները:

Գրականություն

1. Կարինե Թորոսյան «50 հարց ու պատասխան»
2. Ա. Ե. Տեր-Գրիգորյան «Արևիկ» մեթոդական ուղեցույց
3. Վ. Սարգսյան «Այբենարան» ուսուցչի ձեռնարկ
4. Ա. Ե. Տեր-Գրիգորյան «Հայոց լեզվի մեթոդիկա»
5. Նախաշավիղ 2010թ. Հուլիս: